



18 (202). ՃՐԱԳ ՈՒՐ ՏԱԿ ԼՈՒՍ ՉԻՏԱ.

Մշեցիմ՝ կէրթա խարիրութեն, կը մտնա թագավորիմ՝ հող, թագավորի քոշկի պատտակ կը նստի՝ օր ըռհաթի, քուն կը տանե, կը քնի, գող գիկա դըրա ճամպու տոպրակ կը գողնա:

Մարդ քնուց գելնա, կը տեսնա՝ հանդե ուր ճամպու տոպրակի գողցի, տարեր ին, կէրթա մըտ թագավոր գանգատ:

— Թագավոր ապրած, — կըսե, — խարիր իմ, քներ ենք քու քոշկի պատտակ, գողն էկի գիմ ճամպու տոպրակ դողցի տարեր է: Թագավորի աչքի յառե՞ջ լե գողութեն կէղնի:

Թագավոր կը ծիծղա, կըսե.

— Կէղնի՛ ու հմա աղե՛կ կէղնի. չորին շըս լսե՛րի, օր ճրագ ուր տակ լուս շի՛տա:

